ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան
26.10.2018թ.

ժամը 11 [45] –ին

Մասնակիցներում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան.

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,

ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,

ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ առաջատար ծառայող Վ. Սահակյան:

"ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ բաց մրցույթ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ բաց մրցույթ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Վ. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Սլացք» ՓԲԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերում (Հավելված 5)՝ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

27.10.2018թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Սլացք» ՓԲԸ-ն շտկել է վերոնշված անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը «Սլացք» ՓԲԸ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատեց բավարար:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Շարունակելով աշխատանքները 01.11.2018թ. և հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Սլացք» ՓԲԸ-ի** որակավորման հատկանիշները

գնահատել համապատասխան **“ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5»** ծածկագրով բաց մրցույթ հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից **1-ին** չափաբաժնում, միաժամանակ գնահատող հանձնաժողովը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն որոշեց անգործության ժամկետ չկիրառել և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **“ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Սահակյան)

“ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)		Տ. Մաթևոսյան
Գնահատող,		Ա. Սիմոնյան
Գնահատող		Ս. Պետրոսյան
Գնահատող		Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝		Վ. Սահակյան